EU4Business

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2020Թ.

ՀԱՅԱՍՏԱՆ

EU4BUSINESS.EU

EU4Business

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԻՆ

Եվրոպական միության «EU4Business»՝ «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնությունը հովանավորության նախաձեռնություն է և ներառում է Եվրամիության բոլոր գործողությունները, որոնք ուղղված են Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ՓՄՁ-ների աջակցությանը:

Ի՞ՆՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ԵՄ-Ն ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՓՄՁ-ՆԵՐԻՆ

Ֆինանսավորման հասանելիություն (ՖՀ)

- Կոնցեսիոն վարկեր ազգային բանկերի միջոցով
- Միկրոֆինանսավորում տնայնագործ բիզնեսների համար
- Փոքր վարկեր ՓՄՁ-ներին
- Ազգային բանկերի աշխատակիցների վերապատրաստում՝ ուղղված ՓՄՁ-ների սպասարկման բարելավմանը
- Ֆինանսական գրագիտության դասընթաց ՓՄՁ-ների համար

Բիզնեսի զարգացման ծառայություններ (ԲԶԾ)

- Անմիջական խորհրդատվություն և դասընթացներ ՓՄՁ-ների համար
- Գործարարության աջակցության ազգային կազմակերպությունների (ԳԱԿ) վերապատրաստում և կարողությունների զարգացում
- Բիզնես ինկուբատորների հիմնում՝ ստարտափերի համար
- Փոխադարձ աջակցության և զարգացման բիզնես կլաստերների զարգացում
- Աջակցություն կառավարությանը՝ նոր շուկաների հատկորոշման գործում
- Կարողությունների զարգացում արտահանման աջակցման կազմակերպություններում

Բիզնեսի համար նպաստավոր միջավայր (ԲՆՄ)

- Կարգավորման շրջանակի բարեփոխման և լավագույն փորձի հանրահռչակում
- Քաղաքականություն մշակողների և կարգավորողների կարողությունների հզորացում
- Հանրային և մասնավոր հատվածների երկխոսության խրախուսում
- Գործարար շրջանակների իրազեկում՝ բարեփոխումների գործընթացների և կանոնների/ընթացակարգերի մասին

ՊՈՐՏՖԵԼ*

26 ծրագիր

76.33 միլիոն եվրո

ԵՄ աջակցության ընդհանուր բյուջե



ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

8,330 ՓՄՁ աջակցություն է ստացել



կանանց ձեռնարկություններ են

4,588 նոր աշխատատեղեր են ստեղծվել

+14.8% աճել է աշխատողների թիվը ԵՄ-ի աջակցությունը ստացող ՓՄՁ-ներում

+13.3% աճ է գրանցվել ՓՄՁ-ների շրջանառությունում

+5.32% ԵՄ-ի աջակցությունը ստացող ՓՄՁ-ները սկսել են արտահանել

+5% ԵՄ-ի աջակցությունը ստացող ՓՄՁ-ները մեծացրել են արտահանման ծավալները

102.9 միլիոն եվրո լրացուցիչ եկամուտ

* 2019թ. տվյալներ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

* 2019թ. տվյալներ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ (ՖՀ)

783
ՓՄՁ
ստացել է վարկ

26%
տրամադրվել է
կանանց
ՓՄՁ-ներին

3.8
միլիոն եվրո
վարկերի ընդհանուր
արժեքը

4,853
եվրո
միջին վարկը

5
գործընկեր ֆինանսական
հաստատություն ստացել է
աջակցություն

ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԲԶԾ)

58
գործարարության աջակցության
կազմակերպությունների
կարողություններ հզորացվել են

6,868
խորհրդատվական
ծառայություններ են
մատուցվել ՓՄՁ-ներին

դրանցից
33.83%
կանանց
ՓՄՁ-ներ էին

181
ՓՄՁ մասնակցել է
«Բիզնեսը բիզնեսի
համար» միջոցառումների

ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ (ԲՆՄ)

38
օրենք, քաղաքականություն
և կանոնակարգ է
բարեփոխվել

321
հանրային և մասնավոր
հատվածների
երկխոսության
միջոցառումներ են
անցկացվել

30
կառավարական
հաստատությունների
կարողությունները
հզորացվել են

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռապատկված առցանց վաճառք, նոր շուկաներ և բիզնես ստանդարտներ սննդի ընկերության համար

«Կարաս» ազգային սննդի ցանցը՝ Հայաստանում սննդի առաքման ամենամեծ ծառայությունը, աջակցություն է ստացել ՎԶԵԲ-ից և «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնությունից՝ բարելավելու մարդկային ռեսուրսների քաղաքականությունները, հիմնելու որակյալ և սննդի անվտանգության հսկողության համակարգ, բարելավելու իր մարքեթինգային ռազմավարությունը և մեծացնելու ընդհանուր ծախսարդյունավետությունը, որը մեկ տարում հանգեցրել է շրջանառության՝ 31% և վաճառքի ծավալների 20% աճի:

Կարդալ պատմությունը

Օրգանական խոտաբույսերը տարածում են բնության բուժիչ ուժը

«ԷԴՆԱ» ՍՊԸ-ն՝ բնական խոտաբուսային թեյ արտադրող ընկերությունը, ստացել է ՎԶԵԲ-ի և «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության աջակցությունը՝ իր արտադրանքի բրենդինգի և փաթեթավորման նոր մոտեցում մշակելու և նոր շուկաներ մուտք գործելու համար: Ընկերությունն արձանագրել է վաճառքի ծավալների՝ 30% ու շրջանառության 35% աճ:

Կարդալ պատմությունը

Գինու գործարանը նոր շուկաներ է գտնում և զբոսաշրջային հանգույց ստեղծում «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության աջակցությամբ

ՎԶԵԲ-ը և «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնությունն աջակցում է «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ-ին՝ տրամադրելով խորհրդատվություն ռազմավարական պլանավորման, արտադրանքի ընդլայնման, ներդրումային պլանի մշակման, դեպի օտարերկրյա շուկաներ ընդլայնման և ֆինանսական մոդելավորման մասին: Արդյունքում, «Ոսկեվազի» վաճառքն աճեց 21%-ով, տարեկան շրջանառությունը՝ 22%-ով, և ընկերությունն արձանագրեց արտահանման 18%-ի աճ:

Կարդալ պատմությունը

Նորարարական բիզնես կենտրոնն Հայաստանում աջակցում է ՓՄՁ-ների աճին

ԵՄ աջակցություն ստացող Սևանի նորարարական բիզնես կենտրոնը դարձել է նոր բիզնես գաղափարների հանգույց. ավելի քան 60 ձեռներեցներ օգտվել են Կենտրոնի ծառայություններից՝ մշակելով բիզնես պլան, իսկ 200 ձեռներեցներ մասնակցել են գործնական դասընթացների: Կանոնավոր կերպով ուսուցում և աջակցություն է տրամադրվում աշխատանք որոնողներին՝ հնարավորություն տալով նրանց աշխատանք գտնել՝ որպես որակավորված մասնագետներ:

Կարդալ պատմությունը

Եռաչափ տպիչներ արտադրող ընկերությունը պաշտպանիչ սարքավորում է արտադրում Հայաստանում

ԵՄ աջակցություն ստացած եռաչափ տպիչներ արտադրող «ՕգմենթԱՐ» ընկերությունն արտադրել է ավելի քան 4000 դիմակ և ակնոց և նվիրաբերել դրանք՝ երկրի 50 հիվանդանոցների՝ արձագանքելով Covid-19-ի ճգնաժամին:

Կարդալ պատմությունը

«Արտ Լանչ» ընկերությունը սնունդ է մատակարարում COVID-ով հիվանդ կամ մեկուսացած 1500 անձանց

«Արտ Լանչ» սննդի, հանրային սննդի և հյուրընկալության ծառայություններ տրամադրող ընկերությունը, ՎԶԵԲ-ի և «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնության աջակցությամբ անցում է կատարել էլեկտրոնային մարքեթինգի մոդելի՝ այսպիսով մեծացնելով շրջանառությունը 78%-ով և բարելավելով վաճառքը 31%-ով: Իր հերթին ընկերությունն աջակցել է Հայաստանին՝ սնունդ տրամադրելով COVID-ով հիվանդ կամ համավարակի ընթացքում մեկուսացված 1500 անձանց:

Կարդալ պատմությունը

Մանրամասների համար տե՛ս՝

EU4BUSINESS.EU